

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍ. ՂԱԼԱՄՔԵԱՐ ՀԱԼԷՊՅԻ

Տ. Ռ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ (Երուսաղէմ)

Փէ դարուն Երուսաղէմի միաբանութեան ականառու դէմքերէն մէկը եղած է Յովհաննէս եպս. Ղալամբեար Հալէպցի: Կենսագրական տեղեկութիւնները սակաւաթիւ են: Մկրտիչ եպս. Աղաւնունի եւ Արտաւազդ եպս. Սիրմէլեան տարբեր առիթներով անդրադառնալով անոր անձին ու գործին, տեղեկութեանց պատառիկները քաղած էին գլխաւորապէս իր ընդօրինակած ձեռագիրներու յիշատակարաններէն: Մկրտիչ Աղաւնունի իր աշխատութեան երկու տարբեր էջերուն վրայ կը խօսի Ղալամբեար Յովհաննէս քահանային եւ Ղալամբեար Յովհաննէս եպիսկոպոսին մասին, առանց նկատելու որ խնդրոյ առարկան միեւնոյն անձն է¹:

Երեւելի այդ հոգեւորականը յաջողած էր գրչութեան, մանրանկարչութեան, փորագրութեան եւ բանաստեղծութեան ասպարէզներուն մէջ: Անոր կեանքը ճակատագրական անկիւնադարձներով լեցուն ըլլալով՝ կ'ենթադրուի որ իր ժառանգութեան կարեւոր մէկ մասը կորսուած է:

Մնած եւ կեանքին մեծ մասը անցուցած էր Հալէպ: Մննդեան թուակաւոր, ինչպէս նաեւ աշխարհիկ կեանքին պարագաները անյայտ են: 1679 թուականին ընդօրինակած Տաղարանին մէջ կան մէկ քանի վկայութիւններ, որոնցմէ հնագոյնը 1633 թուականին կը վերաբերի: Եթէ ատոնք ակունատեսի վկայութիւն նկատենք, ինչ որ շատ հաւանական է, հապա կրնանք ենթադրել որ Ղալամբեար Յովհաննէս, այն ատեն երիտասարդ, ծնած պէտք է ըլլայ Փէ դարուն սկիզբը:

Իր յիշատակարաններէն գիտենք ծնողքին անունները: Հայրը կը յիշուի երկու անունով. Իմիրզ եւ Խոջա Ամիր, իսկ մայրը Մահտեսի Կիլիսաւան: Ղալամբեար Յովհաննէս ունեցած է երկու եղբայր եւ մէկ քոյր: Յիշատակարաններէն մէկը պահած է նաեւ քեռորդիի մը անունը:

Արտաւազդ արք. Սիրմէլեանին կարծիքով Ղալամբեար Յովհաննէս քահանայ ձեռնադրուած է 1664 թուականին²: Իր իսկ ուսուցիչ Աստուածատուր քահանային Հալէպի մէջ գրուած ձեռագիրներէն մէկը սակայն Ղալամբեար Յովհաննէսին անունը կը յիշէ որպէս «Տէր Ովանէս աւագ իրից»³: Ամէնէն հաւանական է որ ինք ձեռնադրուած ըլլայ 1650-ականներուն: Ղալամբեար Յովհաննէս կ'ամուսնանայ Արմաստ անունով գեղեցիկ օրիորդի մը հետ, սակայն ոչ մէկ յիշատակարան պահած է ամուսին՝ ժառանգ ունենալուն փաստ-

¹ Տե՛ս Մկրտիչ եպս. Աղաւնունի, Միաբանք եւ այցելութեան Երուսաղէմ, Երուսաղէմ, 1938, 360, 387: Տե՛ս նաև Փ. Ստեփանեան, Կենսագրական բառարան, հատ. Բ, Երևան, 1981, էջ 196:

² Տե՛ս «Սիոն», 1939, էջ 228:

³ Տե՛ս Նորայր արք. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի, հ. 5, Երուսաղէմ, 1971, ձեռագիր 1535, 290:

տը: Տաղերէն մէկուն մէջ Ղալամքեար Յովհաննէս կը նկարագրէ կնոջը վախճանը՝ կարծես ինքզինքն ալ մեղադրելով:

Այլ իմ շնորհալի սիրուն,
Ան կանիւր լուսուն կարօտուն,
Քո պատճառըն ես եղա,
Զըրկըւար Քրիստոսի լուսուն:

Կինը վախճանած է 1660-ական թուականներուն, յորմեհետէ Ղալամքեար Յովհաննէս՝ երկար տարիներ Հալէպ մնալէ վերջ կը փոխադրուի Երուսաղէմ՝ դառնալով Ս. Յակոբեանց միաբանութեան անդամ:

Կորուստին դառնութիւնը որչափ անամոք՝ Երուսաղէմը իր սրբավայրերով, մանաւանդ Տիրոջը գերեզմանով՝ հետզհետէ սփոփանք կը բերէ իր հոգիին: Երուսաղէմ ան կ'օծուի շուշտակ վարդապետ, այնուհետեւ՝ եպիսկոպոս, իսկ օր ծերութեան կը նշանակուի Ս. Յակոբայ ժամասաց:

Արդէն Հալէպի մէջ Ղալամքեար Յովհաննէս ուսած էր գրչութեան եւ մանրանկարչութեան արուեստը զոր ինք կը կատարելագործէ Երուսաղէմ: Անոր գրչարուեստը շատ ինքնատիպ է: Մեզի հասած առաջին գործը 1679 թուականին Երուսաղէմ ընդօրինակուած Տաղարանն է, իր անուանումով՝ Ճօնկը, այսինքն «աշուղական տաղարան», Արտաւազդ արք. Սիւրմէլեանի մեկնութեամբ⁴: Տաղերուն մեծ մասը գրուեր է Հալէպ, ընդօրինակումը կատարելով Երուսաղէմ: Տաղերը կը պարզեն Ղալամքեար Յովհաննէսին նուրբ բանաստեղծական ճաշակը: Քնարական իր երգերուն եղանակները բազմապիսի են. հոգեւոր, սիրային, գովաբանական եւ ողբերգական: Քերթուածներուն մեծ մասը գրուած է բանակապով, ինչ որ ինքնին հմտութեան ապացոյցն է: Կան նաեւ գրիչին աղերսական տաղիկները. Նորայր արք. Պողարեանի բնութագրումով:

Բովանդակութիւնը նոյնը մնալով՝ զիրենք տարբերողը պահուն տրամադրութիւնն է: 21 նման տաղիկներու մասին գաղափար տալու համար ստորեւ կը բերենք մէկ-երկուքը.

Եւ ինձ գրչիկս մեղօք ի լի
Տէր, ողորմեա յայնմ ատենի,
Եւ թող զմեղս անյիշելի,
Զգործս ձեռացդ անտես մ'առնի:

Յորժամ գայցես կրկին երկիր ի դատ արդար,
Հայցմամբ սրբոցս քո ընդ յառաջս թռչիմ պայծառ,
Նայ զիս ընկալ Ովանէս գրչիկս եւ զխաւար,
Մի դատիցիմ արդարութեամբ այլ զթաբար:

Յովհաննէս Ղալամքեարէն մեզի հասած է ընդամէնը 28 քերթուած եւ քառեակ, որոնցմէ մէկ քանին երգի ձեւով գրուած են: Քերթուածներէն զատ կան նաեւ հինգ հանելուկներ: Քերթուածներուն լեզուն թրքախառն է, իսկ մէկը ամբողջովին հայատառ թրքերէն է:

Յովհաննէս Ղալամքեարի՝ մեզի ծանօթ երկրորդ ձեռագիրը նոյն 1679 թուականին ընդօրինակուած Նարեկն է, որ 1299 թուագրումով կը պահուի Երուսաղէմի Զեռագրաց Մատենադարանը:

Նոյն Մատենադարանին հաւաքածոյէն է նաեւ 1685 թուականին ընդօրինակուած թիւ 2151 ձեռագիրը (Նոր Կտակարանին մասեր), որ կը պարունակէ մէկ քանի առաքելական թուղթեր: Զեռագիրը հետաքրքրական է երկու հանգամանքով:

⁴ Տե՛ս «Սիւո», 1939, էջ 280:

Առաջինը ընդօրինակողին ընդարձակ յիշատակարանն է, որ Յովհաննէս Ղալամբեարի մասին մեր տեղեկութեանց հիմնական աղբիւրն է: Եւ երկրորդը. ձեռագիրը կը պահէ Յովհաննէս Ղալամբեարի հինգ հանելուկները, որոնց պատասխանները սակայն բացակայ են: Հոգեւոր բովանդակութիւն ունեցող այդ հանելուկները տպագրուել են Սիոնի մէջ՝ 1939 թ., Արտատպագրարք. Սիւրմելեանի կողմէ:

Այդ հրատարակումէն օգտուած է Աս. Մնացականեանը, սակայն ոչ ինք, ոչ ալ նախորդը բերած են հանելուկներուն պատասխանները⁵. «Գլուխ եւ աւարտ նոյն սառ կոշեայ» տողով սկսուող հանելուկին անորոգարձած է Արշակ Մատոյիանը (Ստեփաննոս նախավկայ)⁶: Այս հանելուկին պատասխանը կայ նաեւ Նորայր արք. Պողարեանի ձեռագրացուցակին մէջ, ինչպէս եւ «Ձայն եռավանգ տառ վեցեկի» տողով սկսուող հանելուկին պատասխանը (Աթանաս)⁷: Մնացեալ երեք հանելուկներու լուծումը կը պատկանի մեզ:

1

Ոչ եմ կարօտ գոլոյն սերման,
Եւ ոչ ծնողաց իմոյ գոյութեան,
Որով մաշեալ ունիմ զվախճան,
Դարձեալ ունիմ առիթ ծննդեան:
Լուսին

2

Նոյն մի տեսակ եւ մի անհատ,
Այլոց զգայնոց անհամեմատ,
Երկարակեաց անբռնադատ,
Անհայր, անմայր, անզոյգ, ազատ:
Հրեշտակ

8

Ես քառ վանկ հինգ ամանակ,
Կազմեալ տառիք երից երկակ,
Նախատեսիցըն գերունակ,
Ազգաց բազմաց դաստիարակ:
Երեմիա

Տարի մը հոք, 1686-ին Յովհաննէս Ղալամբեար կ'ընդօրինակէ «Բանք Զափաւ», Ներսէս Շնորհալիի ձեռագիրը, որը կը պահուի Ս. Յակոբեանց մատենադարանը՝ 1240 թիւին տակ: Հոն կայ Յիսուս որդին, մի քանի հանելուկներ Շնորհալիէն եւ Յովհաննէս Ղալամբեարի տաղերէն մէկ քանին: ?՝ շատակարանին մէջ գրիչը կը թուարկէ ծնողքին եւ հարազատներուն, ինչպէս նաեւ հոգեւոր զաւակ՝ «թուղթ նիշող եւ կոկող» տիրացու Ղուկասին անունները:

Այս եւ ուրիշ ձեռագիրներուն մէջ Յովհաննէս Ղալամբեար իր ինքնութիւնը կը հաստատէ անձնական կնիքներով: Հնագոյն կնիքը ձուածեւ է եւ կը կրէ իր անունը եւ թուականը՝ արաբական թուանշաններով. [տէր Ովաննէս 1114=1663]: Յաջորդ կնիքին վրայ կ'երեւի խաչը՝ վրան Յիսուսը, շորս կողմ զարդանիշեր եւ վարը թուականը. 1113 (+ 551)=1664: Մեզի ծանօթ վերջին կնիքը կը վերաբերի 1688 թուականին եւ ուղղանկիւնածեւ է՝

⁵ Տե՛ս Ա. Ը. Մնացականեան, Հայ միջնադարեան հանելուկներ, Երեւան, 1980, էջ 507:

⁶ Տե՛ս Ա. Մատոյեան, Միջնադարեան հայկական պոեմը ԺԼ—ԺԶ դարերում, Երեւան, 1985, էջ 55:

⁷ Տե՛ս Նորայր արք. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի, հ. 6, էջ 207:

«Ք[րիստոս]ի Ծ[ա]ն[ա]լ
Յովհաննէս եպի
սկ[ո]պ[ո]ս Հ[ա]լ[է]պօցի
թվ ՌՄԼԷ»:

Ինչպէս նշած ենք, Յովհաննէս Ղալամբեար վարժ էր նաեւ մանրանկարչութեան մէջ: Իր մատենաները հետաքրքրական են զարդարուեստի եւ մանրանկարչութեան տեսակէտէն: Ան մեծաւ մասամբ կը գրէ նօտրգիր, իսկ գլխագիրները՝ ծաղկագիր կամ թռչնագիր: Խորանները ձեւաւորուած են ճոխ, տիրական գոյները ըլլալով կարմիր, մանիշակ ու կապոյտ:

Իր գրութեանց մէջ Յովհաննէս Եպիսկոպոսը ինքզինք կ'անուանէ կամ Ղալամբեար, կամ ալ Պարոնտէր: Ղալամբեար անունին հաւանական բացատրութիւնը մանրանկարիչի եւ փորագրողի իր հմտութիւնն է, քանի որ Ղալամբ ոչ միայն գրիչ է, այլեւ փորագրողի գործիքը: Ղալամբեարին՝ վերջիշուած կնիքները ամենայն հաւանականութեամբ իր ձեռքին գործն են:

Իր ընդօրինակած Նոր Կտակարանի օրինակին մէջ Յովհաննէս Ղալամբեար իր անունէն վերջ ապագային աւելցուցեր է Պարոնտէր բառը՝ ուրիշ մեկանով: Հայ եկեղեցին ունեցած է շատ պարոնտէրներ, սակայն բառին բուն իմաստը առեղծուած մըն էր միշտ: Հայագէտներէն Արտաւազդ արք. Սիւրմէլեան բառին ծագումը կը վերագրէր արաբերէն սէիտէ կամ ֆրանսերէն monseigneur բառին⁸: Մեր կարծիքով նմանօրինակ բացատրութիւնը բւււրար չէ, քանի որ տրուած բառին մեկնաբանութիւնը չի համընկնէր բառարանին տուած բացատրութեանը: Ըստ բրիտանական հանրագիտարանի կաթոլիկ եկեղեցու մէջ այդպէս են կոչուել անոնք, որ ինչ-որ պաշտոն ունէին եւ կը պատկանէին «պապական ընտանիքին»: Mon-seigneur իրաւունք ունի ներկա գտնուելու պապական մատան մէջ եւ մասնակցելու բոլոր հանրային, կրօնական, ընկերային տօնախմբութիւններուն, կրելով համապատասխան պատմուճան: Այդ տիտղոսին կարող էին հաւակնել պատրիարքներ, արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, ինչպէս նաեւ որոշ աշխարհականներ⁹: Ըստ Ալպոյաճեանի պարոնտէր կը կոչուէին ծայրագոյն վարդապետութեան աստիճան շունեցող եպիսկոպոսները¹⁰: Այդ աստիճանին տէր հոգեւորականներ՝ եպիսկոպոս ըլլալ թէ՛ նոյնիսկ կաթողիկոս՝ զիրենք յաճախ վարդապետ կ'անուանէին: Լիարժէք չէ նաեւ Միջին Հայերէնի Բառարանին բացատրութիւնը. «Յարգական տիտղոս՝ պարոն կամ տէր նշանակութեամբ, որ տրուում է անուանի մեծահարուստ մարդկանց»¹¹: Եղած բացատրութիւններէն առուել համոզիչ ու լման կը թուի Լեւոն Խաչիկեանինը: Նշելով, որ այդ եզրը հայ իրականութեան մէջ կը կիրարկուի ժԾ դարէն սկսեալ, Լեւոն Խաչիկեան կ'արձանագրէ, որ այն ատեն Հայաստանի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնները շողկապուած էին միմեանց: Հոգեւորականներէն շատեր կը շարունակէին տէր մնալ հայրենական իրենց կալուածներուն, ըլլալով նոյն ատեն թէ՛ պարոն (այսինքն աշխարհիկ իշխան), թէ՛ տէր (հոգեւոր առաջնորդ):

Պարոնտէր կը կոչուէին Աղթամարի եւ Գանձասարի կաթողիկոսները, Սիւնեաց եպիսկոպոսները, Հաւուց Թառի եւ բազմաթիւ այլ վանքերուն ու թեմերուն առաջնորդները: Յայտնի են նաեւ դէպքեր, երբ կալուածի մը բուն

⁸ Տե՛ս «Սիոն», 1939, էջ 208:

⁹ Encyclopedia Britannica, 1768, vol. 15, p. 762.

¹⁰ Տե՛ս «Սիոն», 1939, էջ 208:

¹¹ Տե՛ս Ռ. Ղազարեան, Հ. Աբետիսեան, Միջին հայերէնի քառարան, հ. Բ, Երևան, 1967, էջ 456:

տէրը, որ աշխարհիկ անձ մըն էր, գործակից կ'ունենար տեղացի հոգեւորականներէն մին, սովորաբար՝ իր մերձաւոր մէկ ազգականը¹²:

Ինչպէս տեսանք Յովհաննէս Ղալամբեար Հալէպցին ապրելով եւ գործելով ժէ դարուն, իր ներդրումը ունեցաւ որպէս հոգեւոր գործիչ եւ տաղասաց: Թէ եւ անոր մասին մեր տեղեկութիւնները շատ սուղ են, այնուամենայնիւ պահպանուած եւ մեզի հասած ձեռագիրներէն, բանաստեղծութիւններէն եւ տաղերէն կրնանք պատկերացում կազմել Ղալամբեար Յովհաննէս Հալէպցիի մասին իրրեւ անձնաւորութիւն մը, բանաստեղծ եւ հոգեւոր գործիչ, նոյն ատեն:

Т. Р. КАРАПЕТЯН — Епископ Ованес Галемкар Алеппи.— Автор статьи обобщает все сведения, касающиеся жизни и деятельности этого книжка и духовного деятеля XVII в., и анализирует его лирические стихотворения, загадки. Исходя из прозвища Галемкар и личных печатей Ованеса, исследователь предполагает, что он был также гравером.

¹² Տե՛ս Լ. Խաչիկեան, ԺԵ դարի յիշատակարաններ, Բ մաս, Երևան, 1958, էջ LXIV: